առաքեալի ձեռքով, ուր կարգած է եղել վերատեսուչ հովիներ, որ հետզհետէ ծաղկում, եպիսկոպոսարան և ապա Աղուանից աշխարհի կաթողիկոսարան է դառնում մի ժամանակ *), ինչպէս այդ պարզ երևում է վանքիս մուտքի առաջ թաղուած կաթողիկոսների շիրիմների վրայ ձգուած տապանաքարերի արձանագրութիւններից։ Աւանդաբար պատմում են, որ ս. Եղիշէ առաքեալն ունեցել է երեք աշակերտներ,—Վլաս, Քահալցիցիկ և Գօմ-Մուրատ **)։ Որոնցից առաջինը նահատակուած և թաղուած է Նիժ գիւղաքաղաքի ս. Եղիշէի եկեղեցու սեղանի տակը, երկրորդը նահատակուել ու թաղուել է Վարդաշէն գիւղաքաղաքի ստորոտում, մի գեղեցիկ բլրակի վրայ, որ յետոյ Վարդաշէնցի բարեպաշտ Առաքել Մուրատեանը իւր ծախքով շինում է մի փոքրիկ մատուռ 1811 թ. որ Գեր. Մ. եպ. Բալխուդարեան սրբազանի ասելով, այժմս քայքայուած վիճակի մէջ է ***)։ Իսկ երրորդը նահատակուած ու թաղուած է մի բարձր լեռան գլխին, որ գտնուում է Ծերիկ գիւղի հիւսիսային արևմտեան կողմը։ Ս. Եղիշէ առաքեալին անօրէն լեռնականները նահատակել և ձգել են մահապարտների համար յատկացուած այն հորի մէջ, որ այժմս գտնուում է Հայից թը-

---

*) Տես, «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 377 և «Աղուանից երկիր» երես 249—250։

**) Տես, «Ճանապարհ. ի Մեծն Հայաստան» երես 380 և «Աղուանից երկիր» երես 217։

***) «Աղուանից երկիր» երես 248։